Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԳՄՍ նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով 2022թ.երկրորդ կիսամյակում ստացվել է 8380 հեռախոսազանգ: Քաղաքացիները դիմել են ոլորտին վերաբերող բազմաբնույթ հարցերով:

Պետք է նշել, որ «Թեժ գծով» ստացված զանգերում գերակշռում են հանրակրթության ոլորտին վերաբերող հեռախոսազանգերը՝ պայմանավորված նոր ուսումնական տարվա մեկնարկով:

Ամփոփելով 2022 թվականի երկրորդ կիսամյակը կարելի է ասել, որ համեմատաբար շատ են եղել, առաջին դասարանցիների ընդունելության, դպրոցից դպրոց տեղափոխության, դպրոցական օլիմպիադաների, ուսուցիչների և ծնողների իրավունքների պարզաբանմանը վերաբերող, դպրոցական աբոնեմենտային ծրագրի, կամավոր ատեստավորման, հավաստագրման քննությունների, բուհական ընդունելության քննությունների, ուսանողների վարձավճարների զեղչերի վերաբերյալ ստացված հեռախոսազանգերը:

Առանձնակի կարելի է ընդգծել Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության կողմից ներդրված բուհական ընդունելության քննությունների նոր կարգը, որով դիմորդներին երկու անգամ բուհական քննություններ հանձնելու հնարավորություն է տրվում /հունվար, հունիս/: Սա մեծ հետաքրքրվածություն է առաջացրել դիմորդների շրջանում և դրա հետ կապված բավական մեծ թիվ են կազմել այս թեմայով ստացված հեռախոսազանգերը: Վերջին երկու ամսում այս թեմայով ստացվել է մոտ 300 զանգ:

Ստացված բոլոր հեռախոսազանգերին տրվել են հանգամանալի և սպառիչ պատասխաններ, դրանց մի մասն էլ, անհրաժեշտության դեպքում, ուղղորդվել են ԿԳՄՍՆ բովանդակային վարչություններ:

«Թեժ գիծ» հեռախոսակապով ստացված այն բողոքները, որոնք լրացուցիչ ուսումնասիրության կարիք են ունեցել, գրավոր տեսքի են բերվել և շրջանառվել մալբրի համակարգով / 65 բողոք /:

ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության փորձագետ՝ ԱՄԱԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ